

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ է Ֆ օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.
Յայտարարութիւնները համար վճարում են
լիւրքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է Լ է Ֆ օ ն № 253.

Կիրակի, յունվարի 25-ին, Մոզնուս. Գիտըզ եկեղեցում

ԿԱՏԱՐԻՆԵ ՄԿՐՏՁԵԱՆ ԻՆՖԻԱՏԵԱՆՑԻ

ժամկան քառասներորդ օրը կը կատարվի հոգեհանգիստ: Հոգեհանգիստը կը սկսվի ժամը 12-ին:

2—2

ԲՈՎԱՆԴԱՅԻՆԻՑԻՆ

Քաղաքական տեսութիւն. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ. Մամուլ. Նամակ երևանից. Նամակ Բազումից. Նամակ Գանձակից. Նամակ Մարազմուշից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ. Հեռուր Արևելքում. Արաքսի լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մի հետաքրքրական քննութիւն:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՆ

Հեռուր Արևելքի մասին ստացած վերջին տեղեկութիւնները յուզիչ են: Ռուսաց զործակալութեան հետազոտողները հազարաւոր են, որ տիրող դրութիւնը սպառնական է և պատերազմ կարող է յայտարարվել ամեն մի րոպէ:

Սակայն պատերազմ դեռ չէ յայտարարված: Ռուսաց կառավարութեան վերջնական յայտարարութեան և այժմ ճապոնական պետերի միջև կարող է ծագել ծանաղանքներէ մէջը, կամ համաձայնել Ռուսաստանի պայմաններին հետ և խաղաղութեամբ վերջացնել վէճը, կամ թէ մերժել առաջարկված պայմանները և պատերազմ հրատարակել:

Պատերազմ, ճակատամարտ դեռ չը կայ, բայց զորաշարժեր կան երկու կողմից էլ: Ռուսաստանը, ինչպէս հայորդուն է Ռուսաց հեռագրական գործակալութիւնը, զորքեր է ուղարկում դէպի Կորէայի սահմանները, ուժեղացնում է Պորտ-Արտուր նաւահանգստի զինաւորութիւնը, ձիեր է գնում Մանչուրիայում, ամրացնում է այնպիսի տեղեր, որոնք կարող են պաշտպանութեան կէտեր դառնալ ռուսաց զորքի համար: Եսպանիան իր կողմից զորք է իջեցրել Կորէական ափերի վրա, աշխատում է փակել այն նեղուցը, որ զբնակում է Եսպանիայի և Կորէայի մէջ և իր ձեռքը գցել Կորէայի այն երկաթուղին, որ կապում է ծովափնայ

Չեմուլպօ քաղաքը կենտրոնական Սեուլ քաղաքի հետ:

Ռուսաց զորքերը շարժվում են դէպի Եալու գետը, որ գտնվում է Կորէայի հիւսիսում: Եալու գետը ընդհանուր ուղղութեան գծերից մէկը կը լինի այն դէպքում, եթէ պատերազմական գործողութիւններ սկսվեն, որովհետեւ այդտեղ կարող են ընդգրկվել կամ այդտեղից այս ու այն կողմ շարժվել թշնամի զորքերը:

Վերջիվստօսում գտնվող եսպանական առևտրական գործակալին յայտնված է ռուսաց վարչութիւնից, որ նա պատրաստ լինի թողնել քաղաքը, որովհետեւ յանկարծակի կարող են պետութիւնները միջադրային յարաբերութիւններ ընդհատվել: Եսպանացի վաճառականներ և ամեն տեսակ ծառայողներ անգլիական նաւերով տեղափոխվում են Հեռուր Արևելքի ռուսական հողերից դէպի Եսպանիա:

Պատրաստութիւններ տեսնված են և տեսնվում են երկու կողմից ամենաեռանդուն կերպով: Գնվել են և գնվում են մի քանի պաշարներ զորքի համար, մեծ քանակութեամբ քարածուխ շոգենաւերի համար, պատերազմական մթերքներ զորանոցների համար, որպէս զի զօրագնդերը կարողանան անարգել կերպով առաջ շարժվել հէնց որ կը յայտարարվի պատերազմ:

Քաղաքական աշխարհը ուշի ուշով հետևում է բանակցութիւնների ելքին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

Մ Ս Մ Ո Ւ Լ

Եթէ իւրաքանչիւր պարագայում ունի իր աշխուրթեան գաղտնիքը, իր օրէնքը, առանց որի զարգանալ ու բարգաւաճել չէ կարող վաճառականութիւնը—հում և հւր չէ յայտնի—դաւանում է այս սկզբունքը, որ ինքը իբրև պարագայում, իբրև մարդու երջանկութեան համար ստեղծված գործ, կարող է այն ժամա-

դիւնաւոր կերպով աշխատել մի երկրում այնպէս, որ ուրիշ քաղաքակրթ երկրները հաւասար կերպով օգուտ չը բաղեն նրա աշխատութիւններից: Արդէն վաղուց անհարկն է դարձել ազգերին իրարից արհեստական կերպով մեկուսացնելու աշխատութիւնը: Անկարելի է թագնել մի ազգից ուրիշ ազգերի գիւտերը, առաջադիմութիւնները և զարգացումները, ինչպէս և ոչ մի ազգ չէ կարող բացառապէս ինքն օգուտի իր մէջ երեցած գիւտերից, գաղափարներից: Եւ այդ հաւասարապէս վերաբերվում է թէ մարդկութեան համար օգտակար և բարեբար, և թէ կորստաբեր գիւտերին: Փոխանակութիւնը կատարվում է, ոչ թէ միայն գաղափարների, գիւտերի շրջանում, այլ և նւթական շրջանում: Ոչ մի երկիր չէ կարող գոյութիւն ունենալ, եթէ նա իր դուրսը բոլորովին փակել ուրիշ երկրների ապրանքների առաջ:

Անցնելով հայրենասիրութեան գաղափարին, Պատի ասում է. «Չանգան կերպ կայ հայրենասիրութիւնը հասկանալու. հին է լաւագոյնը: Վրէժը գրում էր. «Հայրենիքի սէրը օտարների հայրենիքի ատելութիւնն է»: Եղան և այնպիսիները, որոնք ուրաջան հայրենիքի գաղափարը անգամ, բայց ուրանալ հայրենիքը, ուրանալ այն յատուկ սէրը, որ մենք պարտաւոր ենք ու-

նակ միայն աշողվել, երբ վաճառականը կարողանում է խաբել և լաւ խաբել: Սա մի շատ հին դաւանանք է և յատուկ է բոլոր ազգերին ու լեզուներին: Վաճառականի անուան հետ կապված է այդ անունը—խաբեայ: Խաբել մեղք է, խաբեայ մարդուն արհամարհում են, պատժում են: Միայն վաճառական է, որ աշխարհի կարգերից ստացել է խաբելու իրաւունքը, որովհետեւ եթէ նա չը խաբէ, չէ կարող առևտուր անել, եթէ ագնիւ ու շիտակ լինի, կը մնայ աղքատ ու խեղճ: Սակայն ժամանակները դարաւոր հասկացողութիւնների մէջ մտցնում են փոփոխութիւններ. և այն հասկացողութիւնն էլ, որ տեսել է վաճառականին մարդկանց խաբելու մենաշնորհը, նոյնպէս որոնում է տեղի տալ աւելի մարդավայել, օրինաւոր հասկացողութեան: Վաճառականութիւնը, ունենալով այնպիսի մի պաշտամունք, ինչպիսին է խաբեայութիւնը, բընականաբար, պիտի արհամարհանէր երթարկվէր ամեն ժամանակ և ամեն տեղ: Եւ իսկապէս, ինչպէս չարամարհել մի դասակարգ, որի սրբութիւնը մի զրուհիի սկզբունք է. «НОВОСТИ» լրագիրը մատնացոյց է անում, որ Արևմուտքում վաճառականութիւնը սկսել է դուրս գալ արհամարհված դասակարգի դրութիւնից:

Մենք կարծում ենք, որ կայ պատճառ, թէ ինչու վաճառականների դասակարգը պակաս պատիւ է վայելում քան գինուորականների, գիտականների կամ նոյն իսկ պաշտօնականների դասակարգը: Այն է, որ թէ գինուորականը, թէ գիտականը, եւ թէ պաշտօնական իրանց գործերը բացարձակ են տալու. ամէն մէկը տեսնում է, թէ ինչ են նրանք անում և ինչպէս: Իսկ վաճառականը իւրաքանչիւր քայլում ունի առևտրական գաղտնիք: Ցամախ այդ «գաղտնիքը» դատարկ խօսք չէ: Նրա տակ թաղվում են շատ հնարքներ և գեղծումներ, ինչպէս ապրանքին ուրիշ ապրանք խառնելը, միմեանց ոտի տակ փոխելը, կեղծ սնանկութիւնները և այլն: Բայց մեծ մասամբ առևտրական գաղտնիքի էությունը բոլորովին անմղ թան է և նրա մեղքագործը ոչ միայն վնաս չէր բերի, այլ նոյն իսկ մի յայտնի օգուտ կը բերէր վաճառականին: Արտասահմանում այս բանը սկսել են հասկանալ և այնտեղ տարեց-տարի հրատարակվում են աւելի շատ և շատ առևտրական լրագիրներ, և առևտուրը դադարում է մի խորհրդարար թան լինելուց, այլ դառնում է մի պարզամտութիւն, որ մատչելի է ամենին, որ բաց է ամենամանրամասն հասարակական վերահսկողութեան համար: Ի հարկէ, սրանով պակասում է ամեն տեսակ գեղծումների հնարաւորութիւնը, որոնք դուրս են գալիս միայն նրանց անհատական անարժանիքներից, նոյնը տալու է ամբողջ դասակարգը: Վաճառականի անունը յարգելի և պատուաւոր է դառնում, եւ վաճառականը, այդպիսով, ձեռք է բերում կիսանքի բարիքները այնպիսի ձեւերով, որոնք մինչև այժմ նրան անմատչելի էին, որովհետեւ կեանքի բարիքները միայն այն չէին, որ վաճառականը լողում է փողերի մէջ, այլ և այն, որ մարդկանց յարգանքն են դրաւում:

Նենալ այն հողի համար, որ տեսել է մեր ծնունդը, որ ընդունել կամ ընդունելու է մեր ծնողների և զաւակների աճիւնները, որ տեսել է մեր վշտերը, յոյսերը, ուր պահպանված են մեր իշխողութիւնները—այդ կը նշանակէ պարզապէս փակվել մի գծում եսասիրութեան մէջ և մարդկութեան սիրոյ պատրասակի տակ, մոռանալ մարդկանց և մարդկանց խմբերը, որոնք մարդկութեան կենդանի տարրերն են: Ամեն մարդ մեր մերձակունցն է, բայց ամենամերձակունցը էլ ամենամօտան է: Եւ սէրը, որքան էլ նա լայն լինի, որքան էլ հեռու տարածվէ, պէտք է սկսէ մեր ընտանիքից, որպէս զի կարողանայ համակցել զաւակին, նահանգին, ազգին և ի վերջոյ, ազգերի մեծ ընկերութեան:

Ուրեմն, մարդ պէտք է սիրէ իր հայրենիքը և պէտք է սիրէ նրան գերագոյն սիրով, ընդունալ ամեն տեսակ գոհողութիւններ և անհաւանգութիւնները: Հաստատելով այդպէս հայրենիքի սիրոյ անհրաժեշտութիւնը, Պատի անցնում է ապացուցանելու, որ հայրենասիրութիւնը պարտաւորեցնում է մեզ սիրել և միւս ազգերին և մարդկութիւնը, որովհետեւ բարոյականութիւնը ամեն տեղ մի պէտք է լինի: Մենք պէտք ենք ունենք օտար հայրենիքներ, ինչպէս նրանք պէտք ունեն մեզ: Եւ իբրև եզրակացութիւն ասում է. «Կարելի

Այս նոր սկզբունքը պէտք է իւրացնեն մանաւանդ հայ վաճառականները: Հին ժամանակներից հայերը ստացել են վաճառական փոփոխութիւն համբաւ: Որքան էլ անհիմն չափազանցութիւն լինի ամբողջ ժողովրդին այդպիսի անուն տալը, բայց գոնէ ճիշտ է որ թէ հին և թէ նոր ժամանակներում հայը պատմական և սոցիալական պայմանների հարկադրանքով մի առանձին հակումն ունի դէպի վաճառականութիւնը, ուր գտնում է աւելի ազատ ու լայն ապարդէյ իր ընդունակութիւնների համար: Հայ վաճառականը, առհասարակ, պահպանողական տարր է և չէ ենթարկվում քաղաքակրթութեան պահանջած փոփոխութիւններին: Արտաբուստ կոլովելով, նա մնում է ներքուստ նոյն հին վաճառականը, որի համար խաբելը թոյլատրված, օրինականացած միակ միջոցն է փող աշխատելու համար: Ո՞ւր չէ յայտնի, որ հայ վաճառականի պատմանով հայ ամբողջ ազգի պատիւն է ընկնում, որովհետեւ շատ օտարներ, չը կարողանալով որոշել վաճառական դասակարգն ամբողջ ժողովրդից, մանաւանդ մոռանալով որ վաճառականութեան ազգի պաշտամունքը մի է աշխարհի բոլոր կողմերում, ամբողջ հայութեան են վերաբերում այն արարները, որոնք վաճառականութեան համար են նուիրաբարձված: Ժամանակ է, որ հայ վաճառականն էլ կերպարանափոխէ իր հաւատալիքներն ու պաշտամունքը և մտնէ այն նոր ճանապարհը, որի վրա վաճառականի սպասում է յարգանք ու պատիւ: Պէտք է փոխել հայեացքները, պէտք է դադար փաճանակակց հասարակութեան մէջ անձնապաշտ փոխամոլութիւնը չէ կարող այլ ևս իղէպղ դառնալ:

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Յունվարի 22-ին.

Այս տարի չը տեսնված ձմեռ է մեղանում: Դեկտեմբերի կէսից սկսած այնպիսի սառնամանիք սկսեց և մինչև այժմ էլ համարեն շաբաթանակվում է, որին շատ քիչ ենք մենք պատահում: Հաւանական են համարում, որ պղտդատու ծառերը ցրտից վնասներ կրած լինեն: Բայց միւս կողմից այս ձմեռը շատ ձիւնառատ տարի է: Սկզբում նստած ձիւնը չըբար, վերջին օրերում, դիզվեց, նորից հաստացաւ, այնպէս որ ջրերի առատութիւնը այս գալիք ամառն քաւարը կը լինի, մի հանգամանք, որից շատ մեծ կախում ունի դաշտային մշակութիւնը Արարատեան դաշտի տափարակներում:

Բամբակի արդիւնաբերութեան այս սեզոնը կարելի է համարել շատ աշող, ոչ միայն բերել առատութեան կողմից, այլ և գնորդ: Բամբակի բերքը անցեալ տարվայ բերքից ոչ միայն պակաս չէ, այլ և շատերի ասելով աւելի է իսկ

է և պէտք է սիրել իր հայրենիքը, աւելի քան բոլոր միւս հայրենիքները, և մի և նոյն ժամանակ արդար լինել և յարգանք տածել դէպի ուրիշների հայրենիքները»:

Շաղ Բիւի, ահաւաւոր Ֆիդիօթը և խաղաղութեան գաղափարների կարապետներէն ինքը, ասում է.

«Մոռանալ իր անձը իր ընտանիքի համար, իր հօր, երեխաների և եղբայրների համար, այդ աւելի լաւ է, քան ապրել խաղաղասիրութեամբ և հոգ չը տանել իր մերձակունցների վիճակի մասին: Մոռանալ իր ընտանիքը մոռանելու միայն իր ծննդավայրի համար, աւելի լաւ է: Բայց ճշմարիտ հայրենասիրութիւնը աւելի հեռուն է տարածվում, քան ծննդավայրի պաշտումը, որովհետեւ բաւական չէ մոռանալ միայն Պարիզի, Պետերբուրգի, կամ Բորժոյի մասին, այլ պէտք է մոռանալ նաև ամենամեծ հայրենիքի մասին: Սիրել Ֆրանսիան մեծ հայրենիքի մասին: Սիրել Ֆրանսիան ցիլիկներն, չէ նշանակում ատել իտալացիներին կամ գերմանացիներին: Ընդհանրապէս, որովհետեւ ամեն մի պրոգրէս, կատարված ֆրանսիացիների ձեռքով, կունենալ անմիջական հետեւեք իտալացիների կամ գերմանացիների վիճակի բարեփոխում: Ինչ կը լինէր մեր քաղաքակրթութիւնը, եթէ նա սահմանափակվէր միայն մեր հայրենիքով, Միւր, Ֆրանսիացիները, չէինք ու-

